ցեալ 'ի զօրութիւնս երկուց Կայսերաց, մին թախանձէր՝ եւ միւսն ժխտէր։ Եւ 'ի սաստկանալ բանից եւ վիճմանց՝ Օսմանեանք հրատարակեցին պատերազմ ընդդէմ Ռուսաց, որ կոչեցաւ Արեւելեան պատերազմ։ Նիզակակից եղեն նմա Անգղիա, Գաղղիա, և Սարտինեա, որ յետոյ միացաւ ընդ Իդալիայ։ Եւ եղեւ 'ի յաղթանակել զօրացն Օսմանեանց և դաշնակից Տէրութեանց 'ի Սեվաստաբօլ, եղեւ ընդհանուր ուրախութիւն 'ի Պետութեան Օսմանեանց, մանաւանդ յԵրուսաղէմ զերիս գիշերս ճրագավառութիւն և հրախաղութիւն, մանաւանդ 'ի բերդն, 'ի զօրանոցս և յայլ կարեւոր տեղիս։ Եւ յետ երկուց ամաց մահուամբ Նիկողայոսի Կայսեր Ռուսաց խօսեցան հաշտութիւն, եւ կնքեցաւ դաշնադրութիւն 'ի Փարիզ, (1856)։ Եւ Ս. Տեղիքն մնացին ըստ առաջին վիճակի 'ի ձեռս իւրաքանչիւր ազգի, որպէս եւ էին, ըստ արամադրութեան վերջին հրովարտակին։ Ի միջոցի սոյն երկուց ամաց նուաղեցաւ թիւ ուխտաւորաց՝ և Յովհաննէս Պատրիարք կրեաց դըժուարութիւն ինչ 'ի կառավարել զԱթոռն, բայց յամենայնի խորշեցաւ 'ի պարտուց՝ զի գիտէր զառաջին անցսն Աթոռոյն։

Յետ դադարելոյ Արեւելեան պատերազմին՝ յաճախեցին ուխտաւորք բազմութեամբ յԵրուսաղէմ, և յերեկոյի Ճրագալուցի Զատկին՝ յորում կատարի հանդէս Լուսաւորութեան 'ի Տաճարին Ս. Յարութեան, ծագեցաւ կրկին մեծ 'ի մէջ երկուց ազգաց և այն յաւէտ 'ի գրգռութենէ Յունաց, և եղեւ աղմուկ և խռովութիւն։ Զի Հայ և Յոյն ուխտաւորք խառնեալք ընդ միմեանս հարկանէին զիրեարս առանց գիտելոյ զպատճառն։ Յայսմ մոլեգնութեան սկսան խորտակել զկանթեղս և պատառել զպատկերս, առանց գիտելոյ թէ ո՛ւմ իցէ, և 'ի վայր հոսեցին զբովանդակ զարդարանս Գերեզմանին Քրիստոսի։ Բազումք յուխտաւորաց և 'ի միարանաց վիրաւորեցան, և եղեւ ինչս մեծ երկուց կողմանց, ապա միջամտութեամբ քաղաքական զինուց դադարեցաւ կռիւն, և Հայք կատարեցին զԹափօրն իւրեանց, և այնպէս դարձան տրտմութեամբ 'ի վանս Ս. Յակոբայ, (1856)։

Ի սմին ժամանակի գնեցին Ռուսք ձեռամբ Յունաց